ՀԱՆՐԱԳԻՐ 18/25

Ներկայացվող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը՝

ՀՀ Ազգային ժողով

Պաշտոնատար անձի անունը և ազգանունը՝

-

Ոլորտ՝

Էկոնոմիկա

Հանրագրի վերնագիրը՝

ԿԱՍԵՑՆԵԼ 2025Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՎԱՏԹԱՐԱՑՆՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջարկը՝

Առաջարկը՝ Կասեցնել 1. 2023թ-ի հոկտեմբերի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-340-Ն ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի 2. 2024թ-ի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-285-Ն ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի 2025թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած դրույթները։

Հիմնավորումը՝

Վերոհիշյալ երկու օրենքների փոփոխությունները, որոնց ՓՄՁ ների համար վատթարացնող դրույթները ուժի մեջ են մտել 2025թ-ի հունվարի 1-ից հիմնավոր դժգոհություններ են առաջացրել ՓՄՁ ների մոտ։ 1. Այդ փոփոխություններն ընդունվել են առանց խորը վերլուծություն, մասնավորապես մեծ շահառու խումբ հանդիսացող՝ 50 հազարից ավելի, ՓՄՁ-երի տեսնակյունից օրենսդրության կարգավորման ազդեցության ՕԿԱԳ։ 2. Հիշյալ փոփոխություններով հիմնովին խախտվել է շրջանառության հարկի, որպես ամբողջ աշխարհում ընդունված պարզեցված, կանխատեսելի հարկային ռեժիմ տրամաբանությունը։ 3. Չնայած նրան, որ նախագծերով թվում է թե ավելի շատ խրախուսական մեխանիզմներ են ներդրվել հիմնավորված ծախսերի միջոցով հարկային բեռի իջեցման համար, դրանով իսկ խախտվել է 2-րդ կետում նշված գաղափարախոսությունը։ 4. Նման փոփխություններն ուղեկցվել են առանց լայն հանրային իրազեկման։ Բացի դա հաշվի չի առնվել այն, որ մեր երկրում արդեն մի քանի տարի է փակված է ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնը և այլևս չկա ինստիտուցոնալ կառույց որը պատասխանատու է մշտապես ՓՄՁ ների զարգացման, իրազեկվածության բարձրացման և հետադարձ կապի ապահովման հարցերում։ 5. Իդեալական դեպքում, եթե նույնիսկ վերոհիշյալ փոփոխություններով իրականացվի հարկերի հաշվառումը, միևնույն է լինելու հարկային բեռի ավելացում (նույնիսկ ֆինանսների նախարարության հաշվարկներով), որը մի շարք ոլորտներում բերելու է մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների և արտադրվող ապրանքների էական գների բարձրացման։ Դրան նպաստելու են ոչ միայն հիշյալ կանխատեսված արդյունավետ հարկային դրույքաչափերի բարձրացումը, այլ նաև դրան հասնելու թե լոգիստիկ, թե վարչական և այլ

ծախսերը: Այս ամենը աբացասական ազդեցություն է ունենալու թե զբոսաշրջության, թե արտահանման և այլ ոլորտների վրա: 6. Հնարավոր չէ մեկ նամակով ներկայացնել բոլոր բացասական կողմերը, որոնք բերելու են հիշյալ օրենքների փոփոխությունները:

Կից նյութեր՝

-

Հանրագրի գլխավոր նախաձեռնող՝

ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա ՀԿ

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49/3, 703

Էլ փոստ՝ info@sme.am

Հեռախոսահամար՝ +37443477000

Digitally signed by
AVAGYAN HAKOB
3912770166
Date: 2025.02.12
23:39:03 AMT